

1.	31.03.10	141-Ն	ԼՂՀ կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին	<a href="#">mi sarg vorishum</a>
----	----------	-------	---	----------------------------------



## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հունվարի 2007թ.

N 15

ք.Ստեփանակերտ

#### ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ԵՎ ԵՐԵՎԱԿՈՒՄՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՂԱՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել օգտակար հանածոների հանքավայրերի և երևակումների պետական կադաստրի վարման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության պետին՝ եռամսյա ժամկետում սահմանել օգտակար հանածոների հանքավայրերի և երևակումների պետական կադաստրում դրանց հաշվառման ձևը (անձնագիրը):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԼՂՀ ՎԱՐՉԱՊԵՏ**

**Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ**

## Կ Ա Ր Գ

### ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ԵՎ ԵՐԵՎԱԿՈՒՄՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ

1. Սույն կարգով կանոնակարգվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում օգտակար հանածոների հանքավայրերի և երևակումների պետական կադաստրի (այսուհետ՝ ԼՂՀ ՕՅՊԿ) վարման կարգը:

2. ԼՂՀ ՕՅՊԿ-ի վարումն իրականացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությունը (այսուհետ՝ լիազոր մարմին):

3. ԼՂՀ ՕՅՊԿ-ի հիմնական նպատակը տեղեկատվական հենքի ստեղծումն է՝ օգտակար հանածոների ուսումնասիրության, օգտագործման և պահպանության ոլորտում միասնական պետական ռազմավարության իրականացման համար:

4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանքավայրերի պետական կադաստրում՝

ա) հաշվառման ենթակա են՝

- հանրապետության օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշիռներով հաշվարկված հանքավայրերը,

- կոնսերվացված հանքավայրերը,

- օգտակար հանածոների երևակումները.

բ) հաշվառման ենթակա չեն՝

- ընդհանուր տարածում ունեցող օգտակար հանածոների երևակումները,

- երկրաքիմիական և երկրաֆիզիկական անկանոնությունները:

5. ԼՂՀ ՕՅՊԿ-ն հանքավայրերի և երևակումների վերաբերյալ հակիրճ նկարագրությունն է, որտեղ տեղեկատվությունը պահպանվում է անձնագրերի միջոցով, որոնցում հիմնականում նշվում են՝

ա) հանքավայրերի՝

- աշխարհագրական տեղադիրքը,

- լեռնաերկրաբանական պայմանները,

- երկրաբանական կառուցվածքը,

- չափերը,

- օգտակար հանածոն (հանածոները) և ուղեկից բաղադրիչները,

- օգտակար հանածոյի (հանածոների) քանակը և որակը,
- պաշարները հաստատող մարմինը և հաստատման ամսաթիվը.
- բ) երևակումների՝
- աշխարհագրական տեղադիրքը,
- լեռներկրաբանական պայմանները,
- երկրաբանական կառուցվածքը,
- կանխատեսվող չափերը,
- օգտակար հանածոն (հանածոները) և ուղեկից բաղադրիչները,
- օգտակար հանածոյի (հանածոների) կանխատեսվող քանակը և որակը:

6. Օգտակար հանածոների ուսումնասիրության արդյունքում հայտնաբերված օգտակար հանածոների հանքավայրերի և երևակումների վերաբերյալ անձնագրերը կազմում և հաստատում է լիազոր մարմինը:

7. ԼՂՀ ՕՅՊԿ-ի նյութերը տրամադրվում են՝

ա) ընդերքի ուսումնասիրման, օգտագործման և պահպանության բնագավառում պետական կառավարման լիազոր, ինչպես նաև տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին՝ ըստ պաշտոնական հարցման,

բ) նախագծահետախուզական, գիտահետազոտական կազմակերպություններին, ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ ընդերքի բնագավառում փաստաթղթերի մշակման համար սկզբնական տվյալներ ստանալու նպատակով,

գ) հասարակությանը՝ ընդերքի բնագավառում հրապարակայնությունն ապահովելու համար:

8. ԼՂՀ ՕՅՊԿ-ի տվյալները հայտատուին կարող են տրամադրվել տեքստային, թվային, քարտեզային տեղեկությունների, դրանցից քաղվածքների, հատկանշական աղյուսակների ձևերով:

9. Պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկատվությունը տրամադրվում է «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

**ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ**

**ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ**

**Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ**